«Էդիթ Պրինտ» հրատարակչություն

Ավարտական հետազոտական աշխատանք

Թեմա՝ Էքսկուրսիաների և մշակութային այցեր դերը սաների զարգացման գործում

Հաստատություն՝ *Օշականի թիվ 8 Անահիտ մ/մ ՀՈԱԿ*

Դաստիարակ՝ Նելլի Աբիսողոմյան

Ղեկավար՝ Ժաննա Ավետիսյան

2023թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....3

ԳԼՈՒԽ 1. ԷՔՍԿՈՒՐՍԻԱՆԵՐԸ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹԱՅԻՆ ԱՅՑԵՐԸ ՈՐՊԵՍ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՄԱՍ

1.1 Էքսկուրսիաների և մշակույթային այցերի դերը և նշանակությունը մանկապարտեզի ուսումնադաստիարակչական գործընթացում.....5

1.2 Նախադպրոցական ուսումնական հաստատություններում էքսկուրսիաների և մշակույթային այցերի կազմակերպման տեսակներն ու փուլերը.....8

ԳԼՈՒԽ 2. ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ ՈՒՂՂՎԱԾ ՍԱՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ ԷՔՍԿՈՒՐՍԻԱՆԵՐԻ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹԱՅԻՆ ԱՅՑԵՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՎՈՐՄԱՆԸ.....12

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ.....19

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆՑԱՆԿ.....20

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Թեմայի արդիականությունը. Նախադպրոցականի ուսումնադաստիարակչական գործընթացում կարևոր տեղ են զբաղեցնում էքսկուրսիաները և մշակույթային այցերը: Դրանք ուղղված են մանկավարժի կողմից երեխաներին գիտելիքների, հմտությունների և կարողությունների փոխանցմանը: Էքսկուրսիաները հնարավորություն են տալիս բնական պայմաններում նախադպրոցականներին ծանոթացնել բնության երևույթներին, սեզոնային փոփոխություններին, մարդու աշխատանքին, որն ուղղված է շրջակա միջավայրի վերափոխմանը: Մշակույթային այցերի միջոցով կարելի է երեխաների մեջ սերմանել սեր հայրենիքի, բնության նկատմամբ, հետաքրքրություն առաջացնել մշակույթային արժեքների նկատմամբ, զարգացնել պատկերացումները անձի, հասարակության մասին: Էքսկուրսիաների ընթացքում նախադպրոցականները ծանոթանում են բնությանը իր ողջ բազմազանությամբ, սովորում են նկատել երևույթների փոխկապակցվածությունը: Ուսումնական տեսանկյունից էքսկուրսիաները արժեքավոր են նրանով, որ դրանք բնության գրկում դիտարկումներ կատարելու լավագույն ձևերից են: Ուստի թեմայի արդիականությունը պայմանավորված է նախադպրոցականների զարգացման գործընթացում էքսկուրսիաների և մշակույթային այցերի արդյունավետության ուսումնասիրության անհրաժեշտությամբ:

Հետազոտության նպատակն է՝ ուսումնասիրել և վերլուծել էքսկուրսիաների և մշակույթային այցերի դերը նախադպրոցականների զարգացման գործընթացում:

Հետազոտության նպարակից բխում են հետևյալ խնդիրները.

1. Ուսումնասիրել հիմնախնդրի վերաբերյալ մասնագիտական գրականություն:
2. Վերլուծել էքսկուրսիաների և մշակույթային այցերի մանկավարժական հնարավորությունները մանկապարտեզի ուսումնադաստիարակչական գործընթացում:
3. Հիմնավորել էքսկուրսիաների և մշակույթային այցերի արդյունավետությունը սաների զարգացման գործում:

Հետազոտության ընթացքում կիրառվել են հետևյալ **մեթոդները**.

- մասնագիտական գրականության ուսումնասիրություն և վերլուծություն
- դիտում, զրույց, հարցում

Հետազոտական աշխատանքի կառուցվածքը. Աշխատանքը բաղկացած է ներածությունից, երկու գլխից՝ տեսական և հետազոտական, եզրակացություններից, գրականության ցանկից: Համակարգչային շարվածքով աշխատանքը կազմում է 20 էջ:

ԳԼՈՒԽ 1. ԷՔՍԿՈՒՐՍԻԱՆԵՐԸ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹԱՅԻՆ ԱՅՑԵՐԸ ՈՐՊԵՍ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՄԱՍ

1.1 Էքսկուրսիաների և մշակույթային այցերի դերը և նշանակությունը մանկապարտեզի ուսումնադաստիարակչական գործընթացում

Էքսկուրսիան պարապմունքների և էկոլոգիական կրթության կազմակերպման ձևերից մեկն է և հանդիսանում է ուսումնադաստիարակչական աշխատանքների կազմակերպման բարդ ձևերից: Այն որպես ուսուցման մեթոդ սկսվել է կիրառվել Արևմտյան Եվրոպայի և Ռուսաստանի մանկավարժների կողմից 18-րդ դարի վերջին և 19-րդ դարի սկզբին: Ուսուցման այս ամենահետաքրքիր ձևի անվանումը գալիս է լատիներեն «excursio» բառից:

Ճիշտ կազմակերպված և անցկացված էքսկուրսիաները և մշակույթային այցերը ինքնին դաստիարակության այնպիսի միջոց են, որոնց օգնությամբ կարելի է դիտարկել և շտկել երեխաների վարքի խնդիրները, որոնք միշտ չէ, որ տեսանելի են սովորական պարապմունքների ժամանակ: Էքսկուրսիաների և մշակույթային այցերի ժամանակ բացահայտվում են յուրաքանչյուր երեխայի և ընդհանուր մանկական կոլեկտիվի առանձնահատկությունները:

Էքսկուրսիաները հնարավորություն են տալիս բնական պայմաններում նախադպրոցականներին ծանոթացնել բնության երևույթներին, սեզոնային փոփոխություններին, մարդու աշխատանքին, որն ուղղված է շրջակա միջավայրի վերափոխմանը:

Էքսկուրսիաների ընթացքում նախադպրոցականները ծանոթանում են բնությանը իր ողջ բազմազանությամբ, սովորում են նկատել երևույթների փոխկապակցվածությունը:

Ուսումնական տեսանկյունից էքսկուրսիաները արժեքավոր են նրանով, որ դրանք բնության գրկում դիտարկումներ կատարելու լավագույն ձևերից են: Էքսկուրսիաների ընթացքում երեխաները բնական պայմաններում անմիջականորեն ծանոթանում են կենդանիներին, և ոչ մի ձեռնարկ, գիրք, լուսանկար և արհեստական մոդել չի կարող փոխարինել դրան:

Էքսկուրսիաները թույլ են տալիս շատ ավելի խորը և ամբողջական ուսումնասիրել բնության երևույթների և օբյեկտների բազմազանությունը, և հասկանալ օրգանիզմների փոխկապակցվածությունը շրջակա միջավայրի պայմանների հետ (սա հանդիսանում է էկոլոգիական կրթության հիմքը) [2, էջ 239]:

Էքսկուրսիաների ընթացքում նախադպրոցականները ձեռք են բերում ինքնուրույն հետազոտելու և դիտարկումներ կատարելու հմտություններ: Դիտարկելու, համեմատելու և ընդհանրացումներ կատարելու կարողությունը երեխաների մոտ առաջացնում է մեծ հետաքրքրություն այն ամենի նկատմամբ, ինչ նրանք ուսումնասիրում են, իսկ ճանաչողության գործընթացն ինքնին ուղեկցվում է բազմաթիվ հույզերով: Այսպիսի ուսուցումը ոչ միայն գրավում է նախադպրոցականներին այլ նաև էքսկուրսիաների ընթացքում տեսածը սովորաբար հեշտ է հիշվում և երկար է մնում: Իսկ էքսկուրսիաների ընթացքում հավաքված նյութերը անսպառ աղբյուր են հանդիսանում հետագա պարապմունքների, խաղերի և աշխատանքային գործունեության համար:

Այսպիսով, մի կողմից բնության գրկում էքսկուրսիաները խորացնում, կոնկրետացնում, ընդհանրացնում են նախկինում ձեռք բերված գիտելիքները, իսկ մյուս կողմից նյութ են տրամադրում հետագա ուսումնասիրությունների, խաղերի և աշխատանքային գործունեության համար:

Էքսկուրսիաները նաև դաստիարակչական իմաստով մեծ նշանակություն ունեն: Միայն էքսկուրսիայի ընթացքում են երեխաները սովորում վերաբերվել բնությանը որպես ընկերոջ և համոզվում են դրա պաշտպանության անհրաժեշտության մեջ, քանի որ միայն էքսկուրսիաների ժամանակ է հնարավոր երեխաներին ցույց տալ բնության գեղեցկությունը: Հայրենի բնության հետ ծանոթությունը նաև հայրենիքի հանդեպ սեր սերմանելու առաջին քայլն է:

Մշակույթային այցերը դեպի թանգարաններ, թատրոններ և ճարտարապետական հուշարձաններ զարգացնում են նախադպրոցականների ստեղծագործական երևակայությունը, գեղեցիկը տեսնելու և գնահատելու ունակությունը, գեղագիտական ճաշակը, ակտիվացնում են սանի ուշադրությունը, դիտողականությունը, հիշողությունը, զգայական ունակությունները:

Էքսկուրսիաներն ու մշակույթային այցերը բարենպաստ ազդեցություն են ունենում նաև նախադպրոցականների ֆիզիկական զարգացման գործընթացում: Բժիշկ և մանկավարժ Յե. Ա. Արկինը գրել է, որ օրվա ընթացքում զբոսանքները երեխայի առողջությունը բարելավելու ամենաօգտակար և լավագույն միջոցն են: Մաքուր օդում էքսկուրսիաները նպաստում են երեխայի ֆիզիկական ակտիվությանը և բավարարում աճող և զարգացող օրգանիզմի կարիքները, ինչն իր հերթին նպաստում է արյան թթվածնով հարստացմանը [2, էջ 240]:

Ինչպես ցույց է տալիս «էքսկուրսիա» բառի իմաստը (լատ. excursio - «ելք»), այն իրականացվում է մանկապարտեզի տարածքից դուրս: Սովորաբար էքսկուրսիաները անցկացվում են սեզոնում 1-2 անգամ: Էկոլոգիական էքսկուրսիաների

բովանդակությունը որոշվում է այն ծրագրով, որով գործում է նախադպրոցական ուսումնական հաստատությունը: Դրան համապատասխան՝ նախադպրոցականները պետք է բազմակողմանի գիտելիքներ ձեռք բերեն կենդանական և բուսական աշխարհի և բնության երևույթների մասին: Էքսկուրսիաների պլանավորումն իրականացվում է հաշվի առնելով սեզոնային փոփոխությունները և տեղական պայմանները: Դաստիարակը պետք է այնպիսի պայմաններ ստեղծի, որ երեխաները ծանոթանան բուսական և կենդանական աշխարհի ամենավառ և հետաքրքիր օբյեկտներին, սեզոնային երևույթներին և գյուղատնտեսական աշխատանքի տեսակներին:

Էքսկուրսիաների և մշակույթային այցերի բովանդակությունը մշակելիս հաշվի է առնվում տեղանքի և սեզոնային երևույթների փոփոխության սկզբունքը, ինչն ապահովում է նյութի ընկալման արդյունավետությունը, իսկ երեխաների մտածողության առանձնահատկություններին համապատասխան գիտելիքների աստիճանական բարդացումը նպաստավոր պայմաններ է ստեղծում նախադպրոցականների ճանաչողական հետաքրքրասիրության զարգացման համար: Դրանց նպատակը կարող է տարբեր լինել: Որոշ դեպքերում էքսկուրսիաները ծառայում են բնության երևույթներին, գյուղատնտեսական աշխատանքներին նախնական ծանոթությանը, իսկ հետագա բոլոր ուսումնական աշխատանքներն ուղղված են ձեռք բերած գիտելիքների պարզաբանմանը, ընդլայնմանը, կոնկրետացմանն ու ընդհանրացմանը: Մյուս դեպքում էքսկուրսիա է իրականացվում գիտելիքները պարզաբանելու և ընդհանրացումներ կատարելու համար: Օրինակ, ավագ նախադպրոցականները բնության կենտրոնում կատարում են բույսերի դիտարկումներ, իսկ ջերմոց այցելությունը կարելի է օգտագործել խոնավությունից, լույսից և ջերմությունից բույսերի աճի և զարգացման կախվածության մասին գիտելիքների ընդհանրացումն նպատակով:

Բնության գրկում էքսկուրսիաների ժամանակ երեխաներին ծանոթացնում են բնական պայմաններում տարբեր բույսերի և կենդանիների առանձնահատկություններին (մարգագետնի և դաշտային բույսեր, թռչուններ և այլն): Միջին նախադպրոցական տարիքից սկսած երեխաներին ցուցադրվում են որոշ բուսական և կենդանական պարզ կենսացենոլոգիական կապեր: Այսպիսով, երեխաները բացահայտում են, որ որոշ թռչուններ սնվում են միջատներով, օգուտ են տալիս անտառին; մրջյունները անտառի սանիտարներ են հանդիսանում; ոչ միայն շատ միջատներ չեն կարող ապրել առանց բույսերի, այլ և շատ բույսեր փոշոտվում են միջատների միջոցով [2, էջ 242]:

Այսպիսով, որպես ուսուցման հետաքրքիր ձև էքսկուրսիաներն ու մշակույթային այցերն առանձնահատուկ տեղ են զբաղեցնում մանկապարտեզի ուսումնադաստիարակչական գործընթացում:

1.2 Նախադպրոցական ուսումնական հաստատություններում էքսկուրսիաների և մշակույթային այցերի կազմակերպման տեսակներն ու փուլերը

Խորհրդային մեծ հանրագիտարանում «էքսկուրսիան» հասկացվում է որպես «տեսարժան վայրեր այցելելը (մշակութային հուշարձաններ, թանգարաններ, ձեռնարկություններ, և այլն), այն գիտելիք ձեռք բերելու ձև կամ մեթոդ է: Էքսկուրսիան այն մեթոդն է, որով կարելի է դիտողականորեն ձեռք բերել որոշակի գիտելիքներ՝ այցելելով նախատեսված թեմային համապատասխանող օբյեկտներ:

Առանձնացնում ենք էքսկուրսիաների և մշակույթային այցերի հետևյալ տեսակները.

1. **Ըստ բովանդակության.**

- ✓ **թեմատիկ,** որոնք կարող են լինել պատմական (բացահայտում է որևիցէ ժամանակաշրջան, կամ էքսկուրսիաներ դեպի ռազմական իրադարձությունների հիշարժան վայրեր);
- ✓ **արտադրություններին վերաբերող էքսկուրսիաներ** (բացահայտում է կոնկրետ ձեռնարկության պատմությունը, ցույց է տալիս ողջ արտադրության գործընթացը);
- ✓ **բնական էքսկուրսիաներ** (էքսկուրսիաներ դեպի բնության հուշարձաններ կամ պատմության թանգարաններ);
- ✓ **արվեստի ուղղվածությամբ էքսկուրսիաներ** (բացահայտում է որևիցէ նկարչի պատմությունը, էքսկուրսիաներ դեպի արվեստի պատկերասրահներ);
- ✓ **գրական, ճարտարապետական և քաղաքաշինական էքսկուրսիաներ** (ուղղված են քաղաքի նախագծի և յուրահատուկ օբյեկտների ուսումնասիրմանը);

2. **Ըստ կազմության և մասնակիցների քանակի՝** անհատական և կոլեկտիվ, տեղական բնակչության, նախադպրոցական տարիքի երեխաների համար և այլն:
3. **Ըստ անցկացման վայրի՝** քաղաքային, թանգարանային և այլն:
4. **Ըստ տեղաշարժման միջոցի՝** հետիոտն կամ օգտագործող տրանսպորտի տարբեր տեսակներ:

5. **Ըստ տևողության** - 4 րոպեից մինչև մեկ օր:
6. **Ըստ անցկացման ձևի** - էքսկուրսիա-զբոսանք, էքսկուրսիա-դասախոսության, փորձնական էքսկուրսիա [4, էջ 283]:

Էքսկուրսիաների և մշակույթային այցերի պլանավորման ժամանակ անհրաժեշտ է պահպանել հետևյալ սկզբունքները.

- դրանք պետք է ապահովեն ուսումնասիրվող օբյեկտների և բնական երևույթների ընկալման վառ ամբողջականությունը, ինչը կնպաստի երեխաների մոտ հետաքրքրասիրության առաջացմանը;
- դեպի նույն վայր կրկնվող էքսկուրսիաները պետք է պլանավորել այն ժամանակ, երբ դիտարկվող օբյեկտում կամ սեզոնային երևույթների մեջ տեղի է ունենում նկատելի փոփոխություններ;
- էքսկուսիաների և մշակույթային այցերի ծրագրի բովանդակության աստիճանական բարդացումը պետք է ընթանա երկու ուղղությամբ՝ դիտարկվող երեևույթների շրջանակի ընդլայնում և նույն օբյեկտների, երևույթների մասին գիտելիքների ընդհանրացում;
- էքսկուրսիաների և մշակույթային այցերի հստակ հաջորդականություն և դրանց միջև փոխկապակցվածություն:

Յուրաքանչյուր էքսկուրսիայի կամ մշակույթային այցի ընթացքում կրթական և դաստիարակչական խնդիրները լուծվում են միասնաբար: Ուստի այն պլանավորելիս հաշվի է առնվում երեխաների գիտելիքները և դիտարկումներ կատարելու կարողությունները: Միևնույն ժամանակ կարևոր է, որ էքսկուրսիաները նպաստեն երեխաների մոտ բնության նկատմամբ հոգատար վերաբերմունքի ձևավորմանը, ուստի անհրաժեշտ է նրանց ներգրավել մեծահասակների մատչելի բնապահպանական գործունեության մեջ (օրինակ՝ ծառերի խնամք, կենդանիների կերակրում, սեզոնային աշխատանք այգում և այլն) [2, էջ 244]:

Էքսկուրսիայի և մշակույթային այցի արդյունավետությունը մեծապես պայմանավորված է նրանով, թե որքան հստակ է մշակված դրա կառուցվածքը, սահմանված են նպատակները, յուրաքանչյուր փուլի կազմակերպման և անցկացման մեթոդաբանությունը:

Էքսկուրսիաների և մշակույթային այցերի կազմակերպման գործընթացը կարելի է բաժանել երեք փուլի.

I փուլ – նախապատրաստական. այս փուլում ուսումնդաստիարակչական աշխատանքը ուղղված է երեխաներին կազմակերպելուն, նրանց փորձի բացահայտմանը, առաջիկա դիտարկման համար նպատակ սահմանելուն, հուզական տրամադրություն ստեղծելուն և հետաքրքրություն առաջացնելուն:

Նախապատրաստական աշխատանքները սկսվում են էքսկուրսիայից մի քանի օր առաջ, իսկ ավարտվում անմիջապես այն սկսելուց առաջ, երբ դաստիարակը հիշեցնում է երեխաներին վարքի կանոնների մասին:

II փուլ - կոլեկտիվ դիտարկում, այսինքն երեխաների ճանաչողական և գործնական գործունեության կազմակերպում: Դրա արդյունավետությունը կախված է դաստիարակի կողմից կիրառված դաստիարակության և ուսուցման մեթոդներից և միջոցներից: Հիմնական մեթոդներից է օբյեկտների և բնական երևույթների դիտարկումը, որն ուղեկցվում է բացատրություններով և մանկավարժի հարցերով, որոնք կարելի է բաժանել երեք տեսակի.

- ✓ հարցեր, որոնք ուղղված են դիտարկվող կենդանու մարմնի մասերի, տեղաշարժման և առանձնահատկությունների ուսումնասիրության ընթացքում երեխաների ուշադրության կենտրոնացմանը:
- ✓ հարցեր, որոնք պահանջում են կատարել համեմատություններ և ընդհանրացումներ;
- ✓ ստեղծագործ երևակայությունը խթանող հարցեր, որոնք նպաստում են ինքնուրույն եզրակացություններ կատարելուն:

Էքսկուրսիաների և մշակույթային այցերի ընթացքում էական նշանակություն ունի երեխաների կողմից տարբեր գործնական առաջադրանքների կատարումը, որոնք բխում են դրանց բովանդակությունից և ապահովում են տարբեր օբյեկտների և երևույթների մասին արդյունավետ գիտելիքների յուրացմանը:

Էքսկուրսիայի **III փուլը եզրափակիչն է**: Այն ընդգրկում է հետէքսկուրսիոն ուսումնադաստիարակչական բոլոր աշխատանքները՝ ուղղված գիտելիքների խորացմանը, համակարգմանը և ընդհանրացմանը [3, էջ 23]:

Այսպիսով, երեխաների հետ հետէքսկուրսիոն ուսումնադաստիարակչական աշխատանքը պետք է իր բովանդակությամբ և ձևով լինի բազմազան, ինչը նպաստում է բնության և մշակութային արժեքների նկատմամբ երեխաների հետաքրքրության խորացմանը, հայրենիքի նկատմամբ սիրո սերմանմանը, և նրանց համակողմանի զարգացմանը:

ԳԼՈՒԽ 2. ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ ՈՒՂՂՎԱԾ ՍԱՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ ԷՔՍԿՈՒՐՍԻԱՆԵՐԻ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹԱՅԻՆ ԱՅՑԵՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՎՈՐՄԱՆԸ

Հետազոտական աշխատանքի գործնական մասն անցկացրել եմ մարզ Արագածոտնի Օշական գյուղի Անահիտ մանկապարտեզում:

Ներկայացնում եմ իմ կազմակերպած էքսկուրսիաները, որի ընթացքում նախապատրաստական փուլում ուսումնադաստիարակչական աշխատանքը ուղղված էր երեխաներին կազմակերպելուն, առաջիկա դիտարկման համար նպատակ սահմանելուն, հուզական տրամադրություն ստեղծելուն և հետաքրքրություն առաջացնելուն: Երկրորդ փուլի նպատակն էր երեխաների ճանաչողական և գործնական գործունեության կազմակերպումը: Օբյեկտների և բնական երևույթների դիտարկումը ուղեկցվել է բացատրություններով և հարցերով: Հարցերն ուղղված են եղել դիտարկվող օբյեկտների առանձնահատկությունների ուսումնասիրության ընթացքում երեխաների ուշադրության կենտրոնացմանը, համեմատելու, ընդհանրացումներ և ինքնուրույն եզրակացություններ կատարելու կարողությունների ձևավորմանը:

Էքսկուրսիայի ընթացքում էական նշանակություն ունի երեխաների կողմից տարբեր գործնական առաջադրանքների կատարումը, որոնք բխում են էքսկուրսիայի բովանդակությունից և նպաստում են տարբեր օբյեկտների և երևույթների մասին արդյունավետ գիտելիքների յուրացմանը:

Էքսկուրսիայի ամփոփումն ընդգրկում էր հետէքսկուրսիոն ուսումնադաստիարակչական բոլոր աշխատանքները՝ ուղղված գիտելիքների խորացմանը, համակարգմանը և ընդհանրացմանը:

Ստորև ներկայացնում եմ իմ կողմից կազմակերպված էքսկուրսիաները:

Էքսկուրսիա 1. /Էքսկուրսիա դեպի բուսաբանական այգի/

Դեպի բուսաբանական այգգի էքսկուրսիայի կազմակերպման նախապատրաստական փուլում զրույց եմ անցկացրել երեխաների հետ.

- Երեխաներ, բուսաբանական այգին գտնվում է Երևան քաղաքում: Այգում գտնվում է վարդերի կոլեկցիոն հողամասը, հնէաբուսաբանական թանգարանը և չորս դենդրարիումները: Դենդրարիումներում ծառերի, թփերի, փաթաթվող բույսերի հավաքածուներ են ներկայացված: Բուսաբանական այգում ներկայացված են նաև մի շարք հազվագյուտ և անհետացող բուսատեսակներ: Բոլոր նրանք ովքեր սիրում են բնությունը, պետք է այցելեն բուսաբանական այգի:

Այնուհետև խոսեցինք բնության գրկում վարքի կանոնների մասին: Հետո վերհիշեցինք բնության մասին բանաստեղծություններ և երգեր, որոնք կարող էինք այնտեղ արտասանել և երգել: Այնուհետև երեխաների հետ միասին այցելեցինք բուսաբանական այգի:

Երեխաների հետ շրջել ենք բուսաբանական այգում, ուսումնասիրել տարբեր բուսատեսակներ: Աշխատանքն ուղեկցվել է բացատրություններով, երեխաների ուշադրությունը կենտրոնացնող հարցերով: Զրույց եմ անցկացրել մարդու կյանքում բնության դերի մասին:

- Երեխաներ բնությունը մեր կյանքում շատ կարևոր դեր ունի, առանց բնության մենք չենք կարող ապրել, չէ որ բույսերը մեզ թթվածին են տալիս, դրանք նաև սնունդ են հանդիսանում մեր և կենդանական աշխարհի համար: Մենք պետք է սիրենք և հոգ տանենք մեզ շրջապատող միաջավայրը: Իսկ այժմ եկեք հանելուկներ կռահենք:

Իմ ու քո գլխի վերևով
Սպիտակ փոքրիկ գառնուկ վազեց,
Մինչ դիմացի անտառ հասավ,
Նվազեց ու անհետացավ:
(Ամպ)
Ողջ աշխարհը ջերմացնում է,
Ջերմ ժպտում է բոլորին:
Ամռանը նրանից փախչում ենք,
Իսկ ձմռանը կարոտում ենք:
(Արև)

Դաշտի զարդն է, գույնը՝ ալ,
Ամեն այտին մի սև խալ:
(Կակաչ)
Այն ինչն է, ինչը, հոտն անուշ,
Ինքը՝ կարմիր,կոթը՝ փուշ:
(Վարդ)

Երեխաները նաև վերհիշեցին բնության թեմայով բանաստեղծությունները և երգերը: Իսկ էքսկուրսիայից վերադառնալուց հետո երեխաները պատմեցին իրենց տպավորությունները և հարցերի միջոցով ամփոփեցինք աշխատանքը:

Էքսկուրսիա 2

Երկրորդ էքսկուրսիան անցկացրել եմ մանկապարտեզի բակում, որտեղ երեխաների հետ միասին ծանոթացել ենք բնության մեջ տեղի ունեցող փոփոխություններին:

Թեմա՝ «**Աշուն»**

Խումբ՝ ավագ (5-6)

Տևողություն՝ 25-30ր

Նպատակ՝ էքսկուրսիայի միջոցով ծանոթացնել երեխաներին աշնանը տեղի ունեցող երեևույթներին:

Խնդիրներ.
Կրթական՝ սովորեցնել երեխաներին նկատել աշնան հատկանիշները և նկարագրել դրանք:
Դաստիարակչական՝ դաստիարակել միմիանց զիճելու, հանդուրժելու, լսելու կարողությունը:
Զարգացնող՝ զարգացնել երեխաների մտածողությունը, ուշադրությունը և երևակայությունը:

Հանելուկի կռահում

Երեխաներ փորձեք կռահել հանելուկը.

Այն ի՞նչն է, ի՞նչը,

Ունի տարբեր տեսակ ծառեր,

Տարբեր գույնի տերևներ,

Մի քիչ ցուրտ է, մի քիչ տաք

Ծիածանով եղանակ:

(Աշուն)

- Երեխաներ տարվա ո՞ր եղանակն է: Այո ճիշտ է, դրսում աշուն է, ծառերը ներկվել են գույնզգույն տերևներով: Աշունը տարվա չորս եղանակներից մեկն է: Այնուհետև ցուցադրում ենք աշնան նկարներ:
- Երեխաներ, հիմա կցուցադրեմ նկարներ և դուք կպատմեք, թե ինչ եք տեսնում նկարում, ի՞նչ գույներ ունեն ծառերը:



Ֆիզկուլտ դադար. Երեխաներ պատկերացրեք հանկարծ անձրև է գալիս, եկեք փորձենք մատների միջոցով ստանալ անձրևի ձայն: Հիմա անձրևը ուժեղացավ և հանկարծ կարկուտ եկավ, ձեռքի ափերով հարվածում ենք մեր ոտքերին, իսկ հիմա կարկուտը դադարեց և դուրս եկավ ծիածանը: Փորձեք ձեռքերը աջ կողմից տանել ձախ կողմ և ասել՝ ծիածանը դուրս եկավ և մեզ լայն ժպտաց:

Այնուհետև երեխաներին առաջարկեցի զննել մանկապարտեզի բակի տարածքը և պատմել, թե ինչ են տեսնում:

Էքսկուրսիան ամփոփեցինք խմբասենյակում, երեխաների կերպարվեստային աշխատանքով: Երեխաները իրենց ցանկությամբ ընտրեցին աշխատանքի կատարման եղանակը, մի քանիսը կատարեցին բնապատկերի, ծաղկամանի մեջ աշնանային ծաղիկների փնջի նկարչություն, ոմանք էլ զամբյուղում սնկերի կամ սկուտեղի մեջ մրգերի ապլիկացիա: Նշեմ նաև, որ աշխատանքները կատարվել են էքսկուրսիայի ընթացքում հավաքված բնական նյութերից: Այս փուլի մանկավարժական խնդիրներն էին երեխաների ստեղծագործական ունակությունների և նրանց գեղարվեստական կարողությունների զարգացումը:

Էքսկուրսիա 3

Թեմա՝ **«Ծառի կեղևը»**

Տարիքային խումբ՝ ավագ (5-6)

Տևողություն՝ 25-30

Մեթոդներ՝դիտման, զրույցի, հարցման և ցուցադրման

Նպատակը՝ ծանոթացնել երեխաներին ծառի կեղևի հետ:

Խնդիրներ.

Կրթական՝ սովորեցնել երեխաներին տարբերակել հիվանդ, առողջ և վնասված ծառի կեղևները:

Զարգացնող՝ զարգացնել երեխաների ուշադրությունը, արագ կողմնորոշվելու կարողությունը, մտածողությունը:

Դաստիարակչական՝ դաստիարակել հոգատարություն, սեր և խնայողական վերաբերմունք բնության նկատմամբ:

Ընթացքը.

Հանելուկի կռահում

Ձեռքեր չունի ծափ է տալիս

Քամու երգին չափ է տալիս:

(Ծառ)

Երեխաների հետ միասին նստեցինք ծառի շուրջ, այնուհետև հարցերի միջոցով սկսեցինք մեր ճանաչողական բնույթի էքսկուրսիան:

Հարցեր.

- Ի՞նչ եք կարծում ծառը շնչում է:

- Ի՞նչու է շնչում ծառը:
- Ի՞նչպես է շնչում այն և այլն:

Երեխաներ, ինձ մոտ կա մի նկար, ապա տեսնենք ինչ է պատկերված այստեղ (ծառի կեղև): Իսկ նկարում պատկերված կեղևը նմա՞ն է մեր բակի ծառերի կեղևներին: Ի՞նչի համար է անհրաժեշտ ծառի կեղևը ծառին (կեղևը պաշտպանում է ծառը արտաքին վտանգներից): Ի՞նչ եք կարծում, ի՞նչից կարող է պաշտպանել կեղևը ծառին: Ապա տեսեք, ծառի ճյուղի կեղևը բարակ է, իսկ բնի կեղևը հաստ ու կոպիտ: Որքան ծառի կեղևը կոշտ է, այնքան ծառի տարիքը մեծ է, որպեսզի ծառը կտրեն և օգտագործեն որպես ամուր փայտ՝ շինարարության, կահույքի, թղթի և արտադրության մեջ, նախ որոշում են ծառի տարիքը ու եթե այն ծեր է և հիվանդ, ապա կտրում են: Ծառի վրա կարող են լինել վնասատու միջատներ, որոնք վնաս են պատճառում նրան: Անտառի բժիշկը՝ փայտփորիկը կտցահարում և ոչնչացնում է վնասատու միջատներին:

Իսկ այժմ խաղի միջոցով կամփոփենք մեր փոքրիկ էքսկուրսիան:

Խաղ. «Զարդարենք ծառը գույնզգույն տերևներով»: Երեխաներին ներկայացնում ենք թղթի վրա պատկերված ծառ առանց տերևների և առաջարկում այն զարդարել աշնան գույներով: Նախապես պատրաստված զամբյուղ ենք ունենում, որին մոտենում են երեխաները, վերցնում մեկ թղթե գունավոր տերև և փակցնում որտեղ որ ցանկանում են (ծառի ճյուղերին): Վերջում ստանում ենք գեղեցիկ աշնանային ծառ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Այսպիսով, ուսումնասիրելով խնդրին առնչվող մասնագիտական գրականությունը և հենվելով իրականացված հետազոտության վրա՝ կարող եմ փաստել, որ

- Էքսկուրսիաներն ու մշակույթային այցերը թույլ են տալիս ավելի խորը և ամբողջական ուսումնասիրել բնության երևույթների, օբյեկտների բազմազանությունը: Դրանց ընթացքում նախադպրոցականները ձեռք են բերում ինքնուրույն հետազոտելու և դիտարկումներ կատարելու հմտություններ, ինչն էլ երեխաների մոտ առաջացնում է մեծ հետաքրքրություն այն ամենի նկատմամբ, ինչ նրանք ուսումնասիրում են: Դրանք նաև խորացնում, կոնկրետացնում, ընդհանրացնում են նախկինում ձեռք բերված գիտելիքները
- Մանկապարտեզի ուսումադաստիարակչական գործընթացում էքսկուրսիաների և մշակույթային այցերի մանկավարժական հնարավորությունները մեծ են: Դրանց արդյունավետությունը կախված է դաստիարակի կողմից կիրառված դաստիարակության և ուսուցման մեթոդներից և միջոցներից: Էքսկուրսիան անհրաժեշտ է ուղեկցել բացատրություններով և հարցերով, որոնք ուղղված պետք է լինեն նախադպրոցականների ուշադրության կենտրոնացմանը, համեմատություններ, ընդհանրացումներ և ինքնուրույն եզրակացություններ կատարելու կարողությունների զարգացմանը:
- Ամփոփելով իմ կողմից կատարված աշխատանքը կարող եմ եզրակացնել, որ մանկապարտեզի ուսումնադաստիարակչական գործընթացում էքսկուրսիաների և մշակույթային այցերի դերը անփոխարինելի է: Այն ոչ միայն թույլ է տալիս ավելի խորը և ամբողջական ուսումնասիրել բնության երևույթների, օբյեկտների բազմազանությունը, ձեռք բերել ինքնուրույն հետազոտելու և դիտարկումներ կատարելու հմտություններ, այլ նաև ձևավորում է համատեղ գործունեության կարողություններ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Մարտիրոսյան Գ. «Էկոլոգիական դաստիարակությունը նախադպրոցական տարիքում», Երևան 2002թ, 78 էջ;
2. Гончарова Е.В.. Теория и методика экологического образования детей дошкольного возраста. Курс лекций для студентов высших педагогических учебных заведений. 2008 -326 с.
3. Куликова Т.А. Экскурсии в природу с детьми дошкольного возраста– М.: Просвещение, 2015. – 55с.
4. Столяренко А.М. Общая педагогика: учеб. пособие для студентов вузов по педагогическим специальностям (030000)/ А.М. Столяренко. - М.: ЮНИТИ, 2006. - 479 с.